ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

15/10/2018

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ

պարոն Արա Բաբլոյանին

Հարգելի՛ պարոն Բաբլոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում է՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Գևորգ Գորգիսյան)

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Գևորգ Գորգսյան

«ԵԼՔ» խմբակցության քարտուղար

096-Ե-179

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«16. Հայաստանի Հանրապետության «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի օրենքի 11-րդ հոդվածով սահմանված վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր ամսվան բաժին ընկնող եկամտի համար կիրառվող դրույքաչափի»:

Հիմնավորում

Նախագիծը կոչված է կանոնակարգել այն դեպքերը, երբ ամսական հարկումը կատարվում է մի դրույքաչափի սահմաններում, սակայն մայրական նպաստի միանվագ փոխանցման դեպքում կիրառվում է ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված այլ հարկման դրույքաչափ, քանի որ փոխանցվող գումարն ավելին է օրենսգրքով նախատեսված համապատասխան սահմանաչափից: Փաստացի քաղաքացին վճարում է առավել բարձր հարկ, քան կվճարեր նշված եկամուտն ամսական ստանալու պարագայում՝ համապատասխան սահմանաչափը գերազանցելու պատճառով:

Օրենքում առաջարկվող փոփոխությունը թույլ կտա վերացնել առաջացող անարդարությունը և տրամադրել քաղաքացուն իրեն հասանելիք նպաստը (եկամուտը) մինչ այդ կիրառվող հարկման դրույքաչափով:

Տեղեկանք Օրենքում կատարված փոփոխությունների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Գ Լ Ո Ւ Խ 27

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 150.

16. Հայաստանի Հանրապետության «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի օրենքի 11-րդ հոդվածով սահմանված վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի նպատակներով եկամտային հարկը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր ամսվան բաժին ընկնող եկամտի համար կիրառվող դրույքաչափի